ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2334 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2093-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» N 2093-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկի՝

1) 171-րդ և 172-րդ տողերի 3-րդ սյունակներում «միջնակարգ» բառից հետո լրացնել «նոր» բառով, «դպրոց» բառը փոխարինել «դպրոցի շենքի կառուցում» բառերով.

2) 174-րդ տողի 6-րդ սյունակում «500» թիվը փոխարինել «800» թվով.

3) 281-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 282-293-րդ տողերով.

«

282	Երևան	Երևանի թիվ 124 հիմնական դպրոց (նախկին «Երևանի թիվ 201 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի տեղակայման վայրում)	հիմնական դպրոց	կառուցում	1000			
283	Երևան	Երևանի թիվ 64 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	432			
284	Երևան	Երևանի Գ.Գուրզանդյանի անվան թիվ 163 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	800-1000 անհատական նախագիծ			
285	Երևան	Երևանի թիվ 157 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	500 անհատական նախագիծ			
286	Երևան	Երևանի Ս. Խանզադյանի անվան թիվ 184 ավագ դպրոց	ավագ դպրոց	կառուցում	650 անհատական նախագիծ			
287	Երևան	Երևանի Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց	ավագ դպրոց	կառուցում	864-1000 անհատական նախագիծ			
288	Երևան	Երևանի Մ. Սարյանի անվան թիվ 86 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերակառուցում	650 անհատական նախագիծ			

289	Երևան	Երևանի Ռաֆֆու անվան թիվ 36 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	1000 անհատական նախագիծ			
290	Երևան	Երևանի Ս. Շահմուրադյանի անվան թիվ 85 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	300			
291	Երևան	Երևանի Վ. Դավթյանի անվան թիվ 37 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	800-1000 անհատական նախագիծ			
292	Երևան	• Երևանի Վ. Վարդևանյանի անվան թիվ 173 դպրոց • Երևանի թիվ 31 հիմնական դպրոց	վերակազմակերպվելու է նոր հիմնական դպրոց	կառուցում	800-1000 անհատական նախագիծ			
293	Լոռի	Վանաձորի Մ. Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում	անհատական նախագիծ			

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ